ԵԴ2/18250/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

31 հուլիսի 2023թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Լ. Սաղոյանս, ծանոթանալով «Էլեն Ավետյան Գևորգի» Ա/Ձ-ի հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

25.07.2023 թվականին «Էլեն Ավետյան Գևորգի» Ա/Ձ-ի ներկայացուցիչ Հարություն Օհանյանը հայցադիմում է ներկայացրել (փոստային ծառայությանն է հանձնել՝ 21.07.2023թ.-ին) դատարան ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/32 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 11-ի թիվ 3 արձանագրությամբ «Էլեն Ավետյան Գևորգի» Ա/Ձ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումի հիման վրա կազմված գործը դատավոր Լ. Սաղոյանին է մակագրվել 25.07.2023թ.-ին, իսկ դատավորի աշխատակազմին հանձնվել՝ 27.07.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Քննության առնելով հայցադիմումը, ուսումնասիրելով կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին, առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր:

ԼԻԼԻԹ ՍԱՂՈՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ, 2
. հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Էլեն Ավետյան Գևորգի» Ա/Ձ-ի հայցադիմումն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/32 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասնակցող հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 11-ի թիվ 3 արձանագրությամբ «Էլեն Ավետյան Գևորգի» Ա/Ձ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2023 թվականին սեպտեմբերի 11-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Լ. ՍԱՂՈՅԱՆ**